# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Գարիկ Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ք. Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 2024 թվականի նոյեմբերի 7-ից 10

**3. Հրավիրող կողմը՝**

Եվրոպական հանձնաժողով

**4. Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն ԵՄ-Հայաստան տնտեսական համագործակցության և հարակից ոլորտների ենթահանձնաժողովի նիստին

**5. Քննարկված թեմաները՝**

ԵՄ-Հայաստան տնտեսական համագործակցության և հարակից ոլորտների ենթահանձնաժողովի նիստը երկկողմ համագործակցության ամենամյա միջոցառում է, որի ընթացքում քննարկումներ են ծավալվում Հայաստանում և ԵՄ-ում մակրոտնտեսական քաղաքականության, տնտեսական իրավիճակի և հեռանկարների, հանրային ֆինանսների կառավարման, ներքին վերահսկողության և արտաքին աուդիտի, ֆինանսական ոլորտում համագործակցության և այլ կարևոր հարցերի շուրջ:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Նիստի ընթացքում, որին մասնակցել են իրավասու բոլոր գերատեսչությունների ներկայացուցիչները, ներկայացվել են Հայաստանի մակրոտնտեսական վերջին զարգացումներն ու առկա վիճակը: Հայկական կողմը հանդես է եկել նաև պետական ֆինանսների կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ զեկույցով՝ անդրադառնալով, մասնավորապես, պետական պարտքի կառավարման, հարկային քաղաքականության ու վարչարարության, հանրային ներդրումների կառավարման, արտաքին աուդիտի բնագավառներում գրանցված զարգացումներին: Զուգահեռաբար, Եվրոպական հանձնաժողովի կողմից ներկայացվել են տնտեսական իրավիճակն ու հեռանկարները Եվրոպական միությունում:

Առանձին ոլորտային քննարկումներ են ծավալվել նաև ֆինանսական ոլորտի՝ ֆինանսական կայունության, ոչ բանկային ֆինանսական շուկայում զարգացումների, մակրոպրուդենցիալ քաղաքականության, վիճակագրության, ինչպես նաև զեղծարարության դեմ պայքարում փոխգործակցության վերաբերյալ:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Նիստի ընթացքում Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ քննարկելու հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններում ներգրավված պետական կառույցների կարողությունների զարգացման նպատակով ԵՄ տեխնիկական աջակցության գործիքների կիրարկման հնարավորությունները:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Առկա չեն:

**Ստորագրությունը, ամսաթիվը՝**

12 նոյեմբերի, 2024թ.